

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-32

### ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան

«25». 01. 2021 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ ԳԱԱ), ի դեմս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի, որը գործում է ԳԱԱ-ի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հայկենսաստեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Աշոտ Սաղյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսաստեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

#### 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված 260166200 (երկու հարյուր վաթսուն միլիոն մեկ հարյուր վաթսուն վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

#### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

##### 2.1 ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 ջընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

## **2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝**

2.2.1 ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

## **2.3 ԳԱԱ-ն պարտավոր է՝**

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

## **2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝**

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

- 2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Օրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
- 2.4.4 կատարել ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
- 2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ԳԱԱ,
- 2.4.6 ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառնությունների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,
- 2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,
- 2.4.8 իրականացնել Օրագրի շրջանակներում ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
- 2.4.9 Օրագրի ավարտից հետո ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,
- 2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Օրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ԳԱԱ-ի հնարավորությունը,
- 2.4.11 Օրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
- 2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

### **3 Օրագրի ֆինանսավորման չափը**

Օրագրի ֆինանսավորման չափը կազմում է 260166200 (երկու հարյուր վաթսուն միլիոն մեկ հարյուր վաթսուն վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

#### **4 Սոնիթորինգ**

**4.1** ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

**4.2** Սոնիթորինգն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

#### **5 Վճարման կարգը և ժամկետները**

**5.1** ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

**5.2** ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

#### **6 Կողմերի պատասխանատվությունը**

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

#### **7 Պայմանագրի գործողության ժամկետը**

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

#### **8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են

երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա  
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24

Հ/հ 900011024115


ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ   
(ստորագրություն)

ՈՍԳԻՄԱՐՏԻՈՍՅԱԼ



Ծրագրի գիտական ղեկավար՝




ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»  
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

ք. Երևան, Գյուրջյան 14

ք. Երևանի թիվ 1 ՏԳԲ

Հ/հ 900018005729

ՀՎՀՀ 00871944

Տնօրեն՝   
(ստորագրություն)

ԱՇՈՏԱՐՅԱԼ



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մաղյան

Հավելված N 1  
2021 թ.  
N 25 / 01 /  
Կ-32 պայմանագրի


ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Աշոտ Սադյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «25» 01 2021 թ. N Կ-32 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 260166200 (երկու հարյուր վաթսուս միլիոն մեկ հարյուր վաթսուս վեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝

  
(ստորագրություն)

ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»  
գիտաարտադրական կենտրոն ՊՈԱԿ

Տնօրեն՝



ԱՇՈՏ ՍԱԴՅԱՆ

## ԱՌԱՋԱՐԴՆԵՐ

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը:

Հայտի հիմքում ընկած է Կենտրոնի ստորաբաժանումների բազմամյա գիտահետազոտական գործունեությունը, որն ուղղորդված է արդի կենսատեխնոլոգիական խնդիրների լուծմանը հետևյալ ոլորտներում՝ կենսադեղագործություն, կենսաբժշկագիտություն, արդյունաբերական կենսատեխնոլոգիա, կենսաէներգետիկա, գյուղատնտեսական և սննդային կենսատեխնոլոգիա, բնապահպանական (էկոլոգիական) կենսատեխնոլոգիա և այլն:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

Կենտրոնի կողմից կատարվող գիտահետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերվում են կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներին և պարունակում են հիմնարար ու կիրառական հետազոտությունների բաղադրիչ:

Հիմնարար բնույթի աշխատանքները կունենան հնարավորինս բարձր որակ, ինչի ապացույցը կհանդիսանա կատարված աշխատանքների տպագրությունը տեղական և արտերկրի բարձր վարկանիշ ունեցող գիտական ամսագրերում, ինչպես նաև համապատասխան հաշվետվությունը: Կիրառական բնույթի աշխատանքներն անհրաժեշտաբար կներկայացվեն արտոնագրման՝ նկատի ունենալով դրանց հետագա առևտրայնացումը:

Սույն ծրագրի բնույթից ելնելով՝ պետք է կարևորել կազմակերպության կազմում գործող Մանրէների ավանդադրման կենտրոնի բացառիկ նշանակությունը՝ որպես մանրէների հավաքածուի պահպանման, հարստացման և զարգացման երաշխավոր: Նշված խնդիրների լուծման համար ծրագրավորված են մանրէաբանների հետ համատեղ հետազոտություններ, որոնք ներառում են օգտակար նյութերի նոր արտադրիչների որոնումը, հայտնաբերումը, մեկուսացումը և ուսումնասիրությունը: Նախատեսվում է ՀՀ արտադրական կազմակերպությունների հետ գիտաարտադրական համագործակցության զարգացումը, գիտահետազոտական արդյունքների իրականացման համար փորձատեղակայանքների մշակումը և ստեղծումը:

Ծրագրի հաջող իրականացման նպատակով կօգտագործվի կենսատեխնոլոգիայի ոլորտում արդիական և ժամանակակից մեթոդաբանություն: Այսպես, բարձրակտիվ շտամ-արտադրիչների ստացման համար կօգտագործվեն խթանված մուտագենեզի և սումատիկ հիբրիդացման տարբեր մեթոդներ: Կենսատեխնոլոգիական արտադրություններում ցանքսանյութի պահպանման համար կօգտագործվեն լիոֆիլիզացիայի և կրիոկոնսերվացիայի մեթոդները: Կենսասինթեզի արգասիքների անջատման նպատակով կօգտագործվեն ֆլոտացիայի, ֆիլտրման և ցենտրիֆուգման մեթոդներ: Նպատակային նյութերի անջատման համար միկրոօրգանիզմների բջջապատերի քայքայումը կիրականացվի ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական մեթոդներով: Կենսասինթեզի կատալիզի հետևանքներից արժեքավոր նյութերի անջատման համար կօգտագործվեն էքստրակտման (պինդ-հեղուկ և հեղուկ-հեղուկ ֆազային), իոնափոխանակային սորբացիայի, աջակցման, մեմբրանային ֆիլտրման և բյուրեղացման մեթոդներ: Կենսասինթեզի արգասիքների խտացումը կիրականացվի հետադարձ օսմոսի, ուլտրաֆիլտրման, գոլորշիացման և ջրազրկման մեթոդներով: Կենսաբանորեն ակտիվ նյութերի առավել արժեքավոր շտամ-արտադրիչների նույնականացումը կիրականացվի մանրադիտարկման, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և մոլեկուլային գենետիկայի մեթոդներով: Կենսաբանական և քիմիական ծագման նմուշների ֆիզիկաքիմիական անալիզները կիրականացվեն նրբաշերտային, իոնափոխանակային, գազային և բարձրարդյունավետ

հեղուկային քրոմատոգրաֆիայի, ավտոմատ ամինաթթվային, անալիզի, էլեմենտային անալիզի մեթոդներով: Կօզտագործվեն նաև ամինաթթուների և պեպտիդների ասիմետրիկ սինթեզի, խառը քեմա-էնզիմոտիկ և այլ մեթոդներ:

Աշխատանքը պետք է կատարվի որպես գիտական հետազոտություն՝ նպատակահարմարության հիմնավորմամբ, արդյունավետության և տեխնոլոգիական տեսական ցուցանիշների համեմատական վերլուծության հիման վրա: Դրանում պետք է ընդգրկվեն գիտական, տեխնոլոգիական, տեղեկատվական և մտավոր տեխնոլոգիաների ոլորտների արդի առաջարկությունները: Աշխատանքում պետք է ստույգ նշվեն կատարողների, գիտական ստորաբաժանումների նվաճումները, ինչպես նաև գիտական արդյունքների կիրառման ոլորտները: Աշխատանքում արծարծված խնդիրները, դրանց լուծումները անհրաժեշտ է հնարավորինս լինեն ինքնատիպ:

Գիտահետազոտական աշխատանքների կատարման ընթացքում ստացված բոլոր նյութերը պետք է ընդհանրացվեն, համակարգվեն և ներկայացվեն եզրափակիչ հաշվետվությունում, որում տրամաբանական հաջորդականությամբ, ստացված տվյալների փաստարկմամբ պետք է նշվեն հետազոտության հիմնական և (կամ) ամենակարևոր արդյունքները:

#### 4. Աշխատանքի բովանդակությունը:

##### **Ամինաթթուների և պեպտիդների սինթեզի լաբորատորիա** (ղեկ.՝ ք.գ.թ. Զ. Մարդիյան)

*“Նոր պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ ոչ սպիտակուցային ամինաթթուների ֆենիլ ալանինի ածանցյալների սինթեզը՝ Մանիխի և Սոնոգաշիրայի ռեակցիաների կիրառմամբ”*

Նախատեսվում է.

- հետազոտել և օպտիմալացնել Մանիխի ամինոալկիլման ռեակցիայի պայմանները, ինչպես նաև սինթեզել 5 նոր կոմպլեքսներ Մանիխի ամինալկիլման ռեակցիայով և դրանցից անջատել համապատասխան նպատակային ոչ սպիտակուցային ամինաթթուները;
- հետազոտել կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի ծայրային ակլինային խմբին տարաբնույթ տեղակալված արիլբրոմիդների Սոնոգաշիրայի քրոսս-համակցման ռեակցիաները, մշակել կողմնային ռադիկալում ացետիլենային կամրջակով կապակցված տարբեր բնույթի տեղակալիչներով (ֆենիլ, նաֆթիլ, թիոֆեն, խինոլին և այլն) արիլային մնացորդ պարունակող (S)- $\alpha$ -ամինաթթուների սինթեզի մեթոդ;
- իրականացնել թվով 5 պոտենցիալ կենսաբանորեն ակտիվ նոր պեպտիդների սինթեզ (S)- $\alpha$ -ֆենիլալանինի ոչ սպիտակուցային ածանցյալների հենքի վրա՝ կիրառելով ակտիվացված էսթերների եղանակը;
- իրականացնել սինթեզված միացությունների պոտենցիալ կենսակտիվությունների բացահայտում՝ կիրառելով AutoGrid 4, AutoDock 4 և PASS-Online համակարգչային ծրագրեր:

##### **Ասիմետրիկ կատալիզի սեկտոր** (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Մկրտչյան)

*“Նոր արդյունավետ քիրալային կատալիզատորների ստացումը և փորձարկումը էնանտիոմերապես հարստացված ոչ սպիտակուցային ամինաթթուների ստացման ռեակցիաներում”*

Նախատեսվում է.

- սինթեզել  $\text{Co}^{\text{III}}$  իոնի նոր, մոդիֆիկացված ստերեոքիմիապես իներտ քիրալային անիոնային կոմպլեքսներ;
- փորձարկել սինթեզված  $\text{Co}^{\text{III}}$  իոնի նոր, մոդիֆիկացված ստերեոքիմիապես իներտ քիրալային անիոնային կոմպլեքսները C-ալկիլման ռեակցիաներում, ինչը նախատեսվում է ալանինի էսթերի և բենզալդեհիդի Շիֆի հիմքի ստացում, և դրանց ամինաթթվային մնացորդին ակլիլացում բենզիլբրոմիդով;

*Որպես սուբստրատ նախատեսվում է սինթեզել ալանինի էսթերի հետ բենզալդեհիդի Շիֆի հիմքի տարբեր ածանցյալներ: Այս Շիֆի հիմքի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջացած C-ալկիլման արգասիքը ենթակա չէ ռացեմիզացիայի: Ռեակցիայի դրական ընթացքի դեպքում կստացվեն  $\alpha$ -ալանինի տեղակալված ածանցյալներ:*



- սինթեզել Ni<sup>II</sup> իոնի հետ պրոպարգիլզիցինի և (S)-2-N-(N'-բենզիլպրոլիլ)-ամինաբենզաֆենոն (BPB) քիրալային օժանդակ ռեագենտի Շիֆի հիմքի առաջացրած հարթ-քառակուսային կոմպլեքսը՝ Ni<sup>II</sup>-(S)-BPB-(S)-Pgly;
- Հետագոտել սինթեզված կոմպլեքսի ամինաթթվային մնացորդի C-ակտիվման ռեակցիաները էլեկտրոֆիլ ազենտներով;
- մշակել α-տեղակալված պրոպարգիլզիցինային կոմպլեքսների օքսիդիչ հետերո-համակցման ռեակցիայի օպտիմալ պայմաններ (*Գլազերի ռեակցիա*);
- մշակել ռեակցիայի արգասիք խառնուրդից էնանտիոմերապես մաքուր նոր (S)-α-ամինաթթուների անջատման պայմանները;
- ուսումնասիրել և պարզբանել ստացված նոր ոչ սպիտակուցային ամինաթթուների կառուցվածքը և կոնֆիգուրացիան;
- իրականացնել նոր սինթեզված ամինաթթուների բժշկականաբանական հետազոտություններ՝ պոտենցիալ դեղաբանորեն ակտիվ պատրաստուկների բացահայտման և հետագայում դրանք առաջարկել դեղագործական արդյունաբերությունում ներգրավելու նպատակով:

**Սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիա** (ղեկ.՝ կ.գ.թ. Ա. Համբարձումյան)

- 1) “*Agrobacterium tumefaciens*-ի N-կարբամոլիլ-β-ալանին ամիդոհիդրոլազի գենի կլոնավորում, կոդավորվող ֆերմենտի անջատում և բնութագրում”

Նախատեսվում է.

- մոդուլային կլոնավորման pET28GGLacZ պլազմիդի կազմում *A. tumefaciens*-ի N-կարբամոլիլ-β-ալանին ամիդոհիդրոլազի գենի կլոնավորում;
- ստացված պլազմիդային կոնստրուկցիաներով *E. coli*-ի ռեցիպիենտ բջիջների տրանսֆորմացում և ռեկոմբինանտ ամիդոհիդրոլազային շտամների ստացում;
- *A. tumefaciens*-ի N-կարբամոլիլ-β-ալանին ամիդոհիդրոլազի ռեկոմբինանտ շտամների աճեցում և նպատակային ֆերմենտի անջատում ու մաքրում;
- *A. tumefaciens*-ի N-կարբամոլիլ-β-ալանին ամիդոհիդրոլազի բնութագրում:

- 2) “*Escherichia coli* HK (*pargJ-T*) ռեկոմբինանտ շտամ-արտադրիչի արգինինի կենսասինթետիկ ակտիվության բարձրացման ուղիները”

Նախատեսվում է.

- սինթեզված արգինինը կատաբոլիզմի չենթարկվող մուտանտներ ստանալու նպատակով համապատասխան միջավայրերի և պայմանների ընտրություն;
- *E. coli* HK (*pargJ-T*) շտամ-արտադրիչի հիման վրա ստանալ մուտանտներ, որոնցում սինթեզված արգինինը կատաբոլիզմի չի ենթարկվում և կուտակվում է կուլտուրալ հեղուկում;
- ստանալ մուտանտներ, որոնցում բացառվում է ամինախումբն արգինինի նախորդին միացնելու փուլի սահմանափակումը;
- ուսումնասիրել արգինինի կենսասինթեզի մակարդակը ստացված նոր մուտանտների մոտ միկրոկենսաբանական և ֆերմենտման եղանակով:

**ԿԱՆ-ի շտամ-արտադրիչների և կենսասինթեզի լաբորատորիա** (ղեկ.՝ կ.գ.թ. Վ. Ղուկասյան)

- 1) “*m-Ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն L-տրիպտոֆանի նոր շտամ-արտադրիչի ստացումը գենետիկասելեկցիոն եղանակներով*”

Նախատեսվում է.

- որոշել *Brevibacterium flavum* MDC 14067 վայրի տեսակի շտամի աճը ճնշող L-տրիպտոֆանի նմանակի՝ *m-Ֆտորֆենիլալանինի*, նվազագույն կոնցենտրացիան և քիմիական մուտազենեզի եղանակով ստանալ նշված նմանակի նկատմամբ կայուն մուտանտներ;

- Երբ թեստ-կուլտուրայի կիրառմամբ որոշել *B. flavum* MDC 14067 շտամի մոտ ստացված մ-ֆտորֆենիլալանինի նկատմամբ կայուն մուտանտների L-տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը;
- մանրէաբանական եղանակով ընտրված մուտանտների L-տրիպտոֆան սինթեզելու ակտիվությունը որոշել խորքային ֆերմենտացիայի եղանակով:

*2) “Օսմոկայուն ազոտֆիքսող շտամների ստացումը՝ որպես կենսաբանական պարարտանյութի ստեղծման հիմք Հայաստանի աղակալած հողերի արդյունավետ պարարտացման համար”*

Նախատեսվում է.

- նախկինում մեկուսացված ազոտֆիքսող շտամների հիման վրա ստանալ սպոնտան օսմոկայուն շտամներ;
- մեկուսացված ազոտֆիքսող շտամների հիման վրա ստանալ N-մեթիլ-N'-նիտրո-N-նիտրոզոգուանիդինով ինդուկցված օսմոկայուն շտամներ;
- ձեռք բերված տվյալների հիման վրա ընտրել առավել հեռանկարային շտամներ՝ հետազայում աղակալած հողերի պարարտացման համար կենսապարարտանյութի ստեղծման նպատակով:

**ԿԱՄ-երի մաքրման և սերտիֆիկացման լաբորատորիա** (ղեկ.՝ ք.գ.թ. Ա. Ծատուրյան)  
*“Նատրիում նուկլեինատի ստացման եղանակի մշակում և որոշ ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում”*

Նախատեսվում է.

- ուսումնասիրել և օպտիմալացնել ֆիզիկաքիմիական պրոցեսները, որոնք ընկած են թարմ հացաթխման խմորասնկերի, ինչպես նաև չոր խմորասնկերի, կենսազանգվածներից, մատչելի և քիչ թափոնային եղանակով նատրիումի նուկլեինատի ստացման եղանակի հիմքում;
- մշակել հացաթխման խմորասնկերի կենսազանգվածից նատրիումի նուկլեինատի կորզման օպտիմալ տեխնոլոգիական ցուցանիշները;
- մշակել նատրիումի նուկլեինատից ուղեկցող խառնուրդների մաքրման արդյունավետ եղանակները;
- մշակել ստացված նատրիումի նուկլեինատի չորացման արդյունավետ եղանակը;
- ուսումնասիրել ստացված նատրիումի նուկլեինատի որոշ ֆիզիկաքիմիական հատկություններ, իսկության հաստատման և մաքրության գնահատման նպատակով:

**Հալենային և նորհալենային դեղապատրաստուկների լաբորատորիա** (ղեկ.՝ ք.գ.դ. Ս. Դադայան)  
*“Սև և սպիտակ խաղողի կորիզների յուղերի համեմատական հետազոտությունը կախված կորիզների մանրեցման աստիճանից և զազային ածխաթթու զազի հոսքի արագությունից”*

Նախատեսվում է.

- 1) Իրականացնել սև և սպիտակ խաղողի կորիզներից բնատուր վիճակում գտնվող ԿԱՆ-երով հարուստ, յուղի ստացման արդյունավետ մեթոդ, որը կընթանա սենյակային պայմաններում, ոչ թանկարժեք սարքավորումների, ածխաթթու զազի ինտենսիվ հոսքի և ցածր ջերմաստիճանում եռացող ոչ թունավոր էքստրազենտի (70 % C<sub>2</sub>H<sub>5</sub>OH) կիրառմամբ:
- 2) Իրականացնել ստացված յուղերի ԿԱՆ-ի որակական և քանակական բաղադրության համեմատական հետազոտություն մշակվող կորիզների մասնիկների չափսերից և ածխաթթու զազի հոսքի ինտենսիվությունից կախված:

**Էկոլոգիական անվտանգության լաբորատորիա** (ղեկ.՝ կ.գ.թ. Ն. Հովհաննիսյան)

- 1) “*Pseudomonas* ցեղերին պատկանող մանրէների հակաբիոտիկների նկատմամբ կայունության հախթահարումը”

Նախատեսված է.

- հետազոտել ոչսպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների ազդեցությունը *Pseudomonas* և *Xanthomonas* ցեղերի ՀԲԿ մանրէների աճի վրա;
- նշված մանրէներում հետազոտել կայունություն սպահովող գեների տեղակայումը՝ քրոմոսոմ/ պլազմիդ;
- կայունության գեներ կրող պլազմիդների միջ- և ներ-տեսակային փոխանցման հետազոտում:

2) “*Էնտոմոպաթոգեն շտամերից արտազատվող միացությունների և այլ միացությունների ազդեցության ուսումնասիրումը Ֆիտոպաթոգեն շտամերի աճի վրա*”

Նախատեսված է.

- բացահայտել *Bacillus thurigiensis*-ի շտամեր, որոնք համատեղ կուլտիվացման պայմաններում արգելակում են *Pectobacterium carotovorum*, *Rhodococcus fascians* և *Pseudomonas syringae* ֆիտոպաթոգենների աճը: Ընտրել առավել ազդեցիվ *B. thurigiensis*-ի շտամեր;
- բացահայտել *B. laterosporus*-ի շտամեր, որոնք համատեղ կուլտիվացման պայմաններում արգելակում են *P. carotovorum*, *R. fascians* և *P. syringae* ֆիտոպաթոգենների աճը: Ընտրել առավել ազդեցիվ *B. laterosporus*-ի շտամեր;
- հետազոտել ընտրված *B. thurigiensis* և *B. laterosporus* շտամերի կուլտուրալ հեղուկությունում պարունակվող նյութերի ազդեցությունը *P. carotovorum*, *R. fascians* և *P. syringae* ֆիտոպաթոգենների աճի վրա:

3) “*Բնական և սինթետիկ նյութերի ազդեցությունը լիպազային, պոլիֆենոլօքսիդազային և պրոտեազային ակտիվություն ցուցաբերող մանրէների շտամերի վրա*”

Նախատեսվում է.

- ուսումնասիրել սինթետիկ միացությունների ազդեցությունը լիպազային ակտիվություն ունեցող կենսաքայքայող մանրէների վրա;
- ուսումնասիրել սինթետիկ միացությունների ազդեցությունը պոլիֆենոլօքսիդազային ակտիվություն ցուցաբերող մանրէների վրա;
- ուսումնասիրել սինթետիկ միացությունների ազդեցությունը պրոտեոլիտիկ հատկություններ ցուցաբերող մանրէների վրա:

**Պրոբիոտիկների ստացման սեկտոր** (ղեկ.՝ կ.գ.թ. Ք. Կարապետյան)

*“Կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային ազդեցության որոշումը”*

Նախատեսվում է.

- ուսումնասիրել ընտրված կաթնաթթվային բակտերիաների հակամանրէային ազդեցությունը տարբեր մսամթերքներից (աղացած միս, մսային պահածոներ, թռչնամիս և այլն) անջատված՝ պաթոգեն (*E.coli*, *Salmonella*) մանրէների դեմ;
- հակամանրէային ակտիվությամբ օժտված կաթնաթթվային մանրէների (լիոֆիլիզացված և կենդանի) համեմատական ուսումնասիրությունը և հեռանկարային շտամերի ընտրությունը;

**Կաթնաթթվային բակտերիաների հետազոտման սեկտոր** (ղեկ.՝ կ.գ.թ. Լ. Դանիելյան)

*“Սննդամթերքի որոշ տեսակների երկարատև պահպանման մանրէաբանական մեթոդների մշակում”*

Նախատեսվում է.

- ընտրված կաթնաթթվային բակտերիաների և նրանցից անջատված հակամանրէային արգասիքների ազդեցության ուսումնասիրությունը մսամթերքը փչացնող մանրէների աճի վրա: Կենսամեթոդի մշակում;
- տարբեր մեթոդների արդյունավետության ուսումնասիրությունը մսամթերքի պահպանման ժամկետների երկարացման վրա:

**Մետաղների կենսատարրավազման լաբորատորիա** (ղեկ.՝ կ.գ.դ. Ն. Վարդանյան)  
“Մանրէային կոնսոլիդացիայի ստացում, ուսումնասիրում և կիրառում առաջնային և երկրորդային հումքերից պղնձի և այլ արժեքավոր մետաղների արդյունավետ կենսակորզման գործընթացումներում”

Նախատեսվում է.

- Արցախի հանրապետության Կաշենի պղնձամուլիբդենային հանքավայրի տարբեր էկոլոգիական խորշերից մեկուսացնել և ուսումնասիրել մետաղներ տարարլուծող բակտերիաներ;
- սկրինինգի և ադապտացման մեթոդների կիրառմամբ ստանալ տարարլուծող բակտերիաների կայուն, բարձր դիմացկունությամբ և ադիեզիայի ու մետաղների կենսակորզման բարձր արդյունավետությամբ օժտված մանրէների խառը կուլտուրաներ և կոնսոլիդացումներ;
- մշակել ադապտացված արդյունավետ տեխնոլոգիական մոտեցումներ՝ Կաշենի հանքավայրի հանքաքարից և պղնձի խտանյութից պղնձի մանրէաբանական ստացման համար;
- համապատասխան բնութագրերով մշակված խառը կուլտուրաների կիրառմամբ կիրականացվի երկրորդային հումքի (էլեկտրոնային և այլ թափոններ) մշակում՝ պղնձի, ցինկի, ինչպես նաև թանկարժեք մետաղների կենսակորզման նպատակով:

**Այլընտրանքային էներգիայի աղբյուրների լաբորատորիա** (ղեկ.՝ ան.գ.թ. Վ. Գոգինյան)

1) “Սևանա լճի ծաղկումը հարուցող ցիանոբակտերիաների կենսաբազմազանության ուսումնասիրումը”

Նախատեսվում է.

- Սևանա լճի ֆիտոպլանկտոնի կենսաբազմազանության կայունության հիմնական ինդիկատոր հանդիսացող Շենոն ինդեքսի հաշվարկ;
- ցիանոբակտերիաների կուլտուրաների ստացում ջրի նմուշներից, որոնք վերցվել են գարուն-ամառ ժամանակաշրջանում՝ Սևանա լճի տարբեր հատվածներից և տարբեր խորություններից;
- մանրադիտակային եղանակով Սևանա լճի վտանգավոր ծաղկում հարուցող ցիանոբակտերիաների վիզուալ նույնականացում՝ ըստ մորֆոլոգիական ցուցանիշների, կենսազանգվածի որակական և քանակական բնութագրում;
- ցիանոբակտերիաների առանձին տեսակների մեկուսացում, մաքրում և նկարագրում:

2) “Սողակալված հողերում աղակալում պալարաբակտերիաների և լոբազգի մշակաբույսերի աճեցման նոր մեթոդի հիման վրա ադուտների վերականգնման եղանակի մշակում”

Նախատեսվում է.

- Հայաստանի վարելահողերից մեկուսացված պալարաբակտերիաների աղային սթրեսին դիմակայող շտամերի և ադադիմացկուն տեր-բուսերի սիմբիոզի էֆեկտիվության ուսումնասիրություն՝ սողակալված հողերում, դաշտային պայմաններում;
- ուսումնասիրել գետնանուշի պալարաբակտերիաների վիրուլենտության բարձրացման հնարավորությունը սոյայի և սիսեռի պալարաբակտերիաների համատեղ կիրառման եղանակով (*Bradyrhizobium japonicum* և *Mesorhizobium cicerii*);
- իրականացնել պալարաբակտերիաների տարբեր տեսակներից բաղկացած հավաքածուի պահպանման և համալրման աշխատանքներ;
- կատարել *M. cicerii* և *M. amorphae* 10 շտամերի գենոտիպավորման աշխատանքներ:

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի տնօրեն՝ \_\_\_\_\_

Ա. Մաղյան

Օրագրի գիտական ղեկավար՝ \_\_\_\_\_

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մաղյան



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ \***

«Հիմնարար և կիրառական հետազոտություններ կենսատեխնոլոգիայի և մանրէաբանության բնագավառներում» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները (այդ թվում՝ Հավելված N 2-ի 5-րդ կետում նշված ակնկալվող արդյունքները)	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
